

ՍՊԱՀԱՆԴԷՍ ՄԸ ՄԻԼԱՆՈՒ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԳԵՋ

Միլանու Մուրատ - Ռաֆայէլեան Ուսանողա-
կան Միութիւնն, Ապրիլի տասներեկին, Միւ-
թարեան վարժարանի մէջ կը սարթէ սգահան-
դէս մը մեր 1915ի Նահատակներու յիշատակին,
այդ առթիւ խօսած է այս ճառը Է. Գ. Նահա-
պետեան՝ հետևողութեամբ սուրբ Հայրապետնե-
րու զանազան ժամանակներ խօսած ներքողնե-
րուն, որոց մէջ ի նկատի առած են վկայից
կրօնական բարոյական և հոգեկան գեղեցկու-
թիւնները քրիստոնէական հաւատքի տեսակէ-
տով։ Անոնց կենդանի հաւատքը, անխախտ յոյսը
և երկնաւոր սէրը, հիմն էր իրենց կենսքի գոր-
ծերուն։ Իրօքն մարդուն բարոյական և քաղա-
քական գործերուն կենդանութիւն կու տայ, կո-
րով և քաջութիւն կը ներշնչէ ամենայն դժուա-
րութեանց մէջ, կը մղէ գմբաջ առ նուիրում
ածինի, առ դիպագնութիւն, առ Նահատակու-
թիւն՝ բարձրագոյն գաղափարի մը, իր բարե-
կամի, այս աշխարհէն դուրս գոյութիւն ու-
նեցող յաւիտենական կենսքի մը համար։ Ու-
րով սուրբ Հայրեր քրիստոսական հաւատոյ
նահատակներու յիշատակը կատարած ժամա-
նակ սուրբ ուրախութեան փոխառած կը ներ-
կայացնէին, յաղթանակի և փառաց տօն կը
կատարէին սկսելով իրենց ներքողը։ Հրաշալի է՝
պայծառ է մեզի համար տօնախմբութեանս հան-
դէսը, և այլն։ և պատշաճ յորդորակով կը խրատ-
տէին հանդիսականները հետեւելու անոնց օրինա-
կին, վառելով իրենց ալ սրտերուն մէջ աստուա-
ծաբանական առաքիտութիւնները, հաւատքն,
յոյսն և սէրը, որով քրիստոնէայքս իսկական
հետեւող, նմանող և Քրիստոսի վարդապետու-
թիւնը ճշմարտապէս կատարողներ կը լինիրք։ և
ոչ թէ Եղիշէի ըսածին պէս, քրիստոնէութիւնը
հանդերձի պէս կրիւ մեր վրայ, փոփոխամիտ,
անհաստատ հաւատքին մէջ, որպէս Յակոբոս Ա-
ռաքեալն ալ կ'ըսէ։ Այո երկմիտ առանց հաստա-
տութեան է, յամենայն հողմոյ չարքի և այլն։ և նաև
Եղիշէի հետ ըսել։ Երազագէտ է այնպիսին
ի կենսոն իւրում։

Գետոյ ՊՊ. Եղիկեան և Գալոբեան ուսա-
նողներ արտասանեցին Պր. Աւետիս Դսահա-
կեանի և Միամանկոյի բանաստեղծութիւններէն
երկու կտորներ, ապա բանախօսեց Պր. Ճարտ.
Պետրոս Պապիկեան, որ անցողաբար զանուած է

Միլան. հանդէսի բացումն և փակումն եղած է
Անմահեան երեք եղբայրներու նուագախումբով
(սրնգի, ջութակի և դաշնամուրի), լաւ տպաւոր-
ութիւն թողլով հանդիսականաց վրայ։

ԽՍՐ.

ՆԵՐՐՈՂԵԱՆ ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ

Յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի

Ահա ասանկի է Աստուծոյ տեսչութիւնը,
որով զաշխարհ կը կառավարէ, և անե-
րևոյթ ձեռքով կ'ուղղէ ամէն բան մի որոշ
վախճանի։ Անշուշտ և մեր այս օրուան
հաւաքոյթն, կը հաւատամ, որ նոյն Նա-
խախնամութեան գործն է, որպէս զի օտար
երկնքի տակ միաբանելով Հայ ազգի բե-
կորներու, հնարաւորութիւն ունենանք հաս-
տատելու մեր մէջ սիրոյն միութեան կապը,
արծածել մեր մէջ համերաշխութեան ոգին,
մտքով և սրտով՝ մեր նահատակաց նուր-
բական նշխարներու դամբարանին շուրջը
բոլորուած։

Երբ զգածուած պահ մը կը խորհիմ
իմ շէն հայրենիքն, երկրաւոր դրախտն
փափկութեան, ուր Աստուծո՞ք ոտքն դրաւ
առաջին անգամ, և փոքը ծիածանն Հայաս-
տանի կապոյտ երկնքի երեսն, ի նշան հաշ-
տութեան ընդ ինքն և մարդկութիւնն. ուր
դրախտի գետերը՝ կ'արբուցանէին ամենա-
զան բոյսեր և ծաղիկներ, աստուածա-
տունկ պարտէզի մէջ, թողած երկնքի
վայելքն, հրեշտակներն փափաքով կու
զային կենցաղակից լինելու առաջին մար-
դոյն հետ, իմ երջանիկ հայրենիքն...
այլ ո՞հ, մինչ այս պահուս, կ'ըսեմ, կը
վերանայ կը սլանայ միտքս դէպ ի դրախտն
փափկութեան, քաղցր հայրենիքս, ահա
հոգոյս աչքին կը պատկերանայ եզեկի-
եւեան զաշտը ամայի անապատ, լի ոսկերօց
մարդկան։ Մահը դժնէ՞ ժպիտով կը թեւար-
կէ անոնց վրայ։ Սակայն, մի՛ երկնչեք
եղբարք իմ, այս մահը արեւելոյթ է, աւելի
երազ կ'եղծանի և կը չքանայ քան ձեռք
արեւի բարկ ճառագայթներուն տակ։ Զի
ես հոն այդ մաայլ և տխուր դաշտի մէջ

կը նկատեմ ըողածն Ս. Նշանն, որ յաղթութիւն ինձ կ'անետէ. հոն կանգնած է կենդանատու Գրիստոս իւր Թագաւորութեամբ, և մահն կը ջըսնայ յերևել լուսոյն յաւիտենականի. կու գայ Նիկիի երեսն շունչն երկնքէն կենդանացնելու, կանգնելու այդ ցամաքած ոսկորներն, Տեսէք, տեսէք թէ ինչպէս մօտէ մօտ գալով, միանալով իրարու հետ կը կանգնին ժողովուրդ բազում, և բիւրաւոր բերաններէ ելած ամպերու որոտումի պէս անաւոր ժայնն կը ընու օրը, կը թնդայնէ այրիքը. Գրիստոս յարեալ ի մենայն, մահոտամբ զմահ կոխեաց և յարութեամբ իրով մեզ կեանս պարգեւեաց, Ուստի մենք ալ Սուրբ յիշման հետ կ'աղաղակենք. Ո՛ր է մահ յաղորտիսն քո: Անմահին մահով, մահկանացուի մահը փոխուեցաւ անմահութեան, կ'երևակայեմ նահատակաց լուսազգեաց հոգիներն, որ կը խմբուին յաղթական Փրկչի շուրջը, յաղթանակի չուն կազմելու զէպ ի երկինք: Փողն երկնաւոր Թաւազաւորին կը զօչէ չարչարակիր զօրքի խմբին. Արիք ելէք ի վեր, ելէք ի վեր նահատակք, մարտիրոսք, արք և կանայք ծերք և տղայք, երիտասարդք և կուսանք: Ահա դաս դաս կը սկսին վերաթելլ. ինչ հրաշալի տողանցք, ծերունիներ սպիտակահեր կարմիր պատմունճաններու մէջ ամս փոփուած, ըտտորագեղ վերաբրկունճ վարդափայլ երիտասարդք ուսերնուն ձգած, շուշանափայլ կուսան օրիորդք լուսափող փող ճողազարդ. ամենքն պսակաւոր, առ մենքն բրաբրոնն ձեռքերնին բռնած, առ մենքն ուրախ զուարթ սաղմոսերգութեամբ հրեշտակաց պարակցութեամբ կ'երթան երկնաւոր Թագաւորի ետեւէն, որ ձեռքին մէջ բռնած և հովին տուած խաչի յաղթական դրօշը, կը կանգնի երկնքի ոսկի զոններու տաշն և կը զօչէ. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայաթիւն երկնից ի սկզբանեալիս: Եւ հինաւուրց Հայրն ամենակալ, իւր յաւիտենական անշարժ աթոռէն, բարձրացնելով արարչագործ ձեռքերը, օրհնութեան ցօղով և շնորհաց համար

բոյրներով կ'ընդունի բիւրաւոր հոգիներ իւր անպարագիր ծոցի մէջ. Զի որ սիրեմ գիս, ըսաւ Գրիստոս, սիրեսցի ի Հօրն իմմէ. Սէ՛րն յաւետենական, իմ Միածին որդին վերստին գնեց ձեզի, օրհնեալ որդիք, այս արքայութիւնը, ուսկից մերս ժուած է ցաւ և տրտմութիւն, և մահոտ երկիւղ. այստեղ յաւիտենական անստուեր լոյսի մէջ պիտի վայելէք անվախճան ուրախութիւն, ամենայն արքոց և հրեշտակաց հետ. Ես զփաստարիւս իմ փառստրեցից:

Այսպէս է քրիստոնէի վիճակը երկրիս վրայ. չարչարանքն յետոյ, վարձատրութիւն. պատերազմէն վերջ՝ յաղթանակ և փառաւորութիւն. Սոյն ճակատագիրը ըստ լորիս կը սպասէ, քաշեալ որդիք պէտք է քաշ ըլլան, նահատակներու որդիքը, անյաղթելի պէտք է մնան իրենց սուրբ կրօնքին մէջ. Զի այս է յաղորտիսն որ յաղթեալ յալարիս հաստառքն մերս: Մեր հայրենիքը, հայ ժողովուրդը, զարեւրով հանազիւստան եղաւ նահատակութեանց, մարտիրոսութեանց, «մեր հողը կարմիր է քրտունել, քարեր կարմիր են ներկուել» և անհասկանալի պիտի մնար մեզի, եթէ չանաղաղառնայինք որ այդ դիցազնական, անրկնճելի և անյաղթ ոգին, անոնք կը ծծէին իրենց քրիստոնէական սուրբ հաւատքէն. կրօնական խորին համոզումները, անթիւ և անսահման էութեան զգացումներն են, որով միտքն կը լուսաւորի, հոգին կ'ըմբռնէ անսահման բարութիւնը և յաւիտենական սէրը: Անոնք ճշմարիտ հաւատքի ներշնչութեամբ կանոնաւորեցին իրենց զգայուն սրտերու առաջին բարախալները, և համաձայնեցուցին տիեզերական ոգւոյն և աստուածութեան յայտնութեան հետ, որ երևելեօք կը տեսնուի. ու այդ անարատ և աստուածասէր հոգիներու սուրբ հայելիի մէջ, կ'անդրադատուի ջիւղ երկնքին պատկերը, Աստուծոյ սէրը, կրօնքի սրբութիւնն, հոգեկան գեղեցկութիւնն:

Ուրիշն այսօր որ մենք կրօնական երկրիւս անպարագիր ծոցով եմք նոսրաւ

գործելու մեր նահատակաց յիշատակն, պէտք է ամփոփուինք մեր մէջ և մտածենք, թէ անոնք ալ մեզի պէս խեղճ, ակար մահկանացուներ էին, բայց ինչպէս կարողացան զերմարդկային ոյժ և կորով ցուցադրել վտանգի պահուն, արհամարհեցին եղծանելի կեանքը, հարստութիւն և վայելչութիւն աշխարհիս, նախընտրեցին մահը, առ ոտն կոխելով ուրացութեան կեանքը։ Կեանքսան դիւցազնաբար մեր հինգերորդ դարու նահապետներուն, որոնք ըստ Եղիշէի. «Չորացորիսն մեռելորիսն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ անանց կենդանութիւն»։ Ահաւասիկ, սիրելի եղբարք, ոչ միայն ըստ մարմնոյ, այլ և անոնց կենդանի հաւատքին ալ ժառանգորդներ պէտք է լինինք զործով բարութեան, հասնիլ օգնութեան՝ ով որ նւթապէս կարօտ է։ Թող մենք մեր սրտերու մէջ աշխարհի սէրը, որ արծաթ սիրութիւն է և կոսպաշտութիւն, և թշնամութիւն առ Աստուած, կ'ըսէ Առաքեալն։ Թող Աստուծոյ սէրը լուսաւորէ և շինէ մեր սրտերն և բեղմնաւորէ մեր երեսակայտութիւնն քրիստոնէի մը արժանաւայել մտածութիւններով։ Չի սրտի մը մէջ, ուր չկայ Աստուած, չկայ նաև սէր, վասն զի Աստուած սեր է, կ'ըսէ Յովն։ Առաքեալ։ Այո, քրիստոնէական սէրն պիտի պարտադրէ օգնելու մեր կարօտեալ եղբայրներուն՝ իրենց կարօտութեան մէջ, մեր որբերուն և տարագրեալներուն։ որոնք դեռ կը տատապին օտարութեան մէջ, շնորհներ անոնց հայրենիքի հանգիստը։ Եւ Յիսուս Քրիստոս նախ սիրեց զմեզ։ Ինքն է աստղը։ Ես գնեց սիրեցի, դառն ալ պատական եք մեկգնկ սիրել։ Միւս Առաքեալն ալ կ'ըսէ։ Մերն Քրիստոսի ստիպեալով, լինել եղբայրասէր, համակարեք, ազնուազուլ, մինչև մեր կեանքը զոհելու բարեկամի համար կազմ և պատրաստ։

Ինչպէս Աւարայրի դաշտի դիւցազուններն, որոնք իշխանազունք, նախարարազունք էին, և մարմնական մեծութեամբ հռչակութեամբ երևելիք, և որոց համար զրեց Եղիշէ։ Մեծ է սերն Աստուծոյ բուն զամեհնայն մեծութիւն երկրատուր և այնպէս աներկիսպ առնէ զմարդիկ իրեն զանաւարմիկ զօրս հրեշտակաց։

Նոյնը կրնանք կրկնել նաև մեր արդի նահապետներուն համար ալ, այս պահուս երեսակայտութեամբ տեղափոխուելով այն վայրերը՝ ուր տեղ որ անոնց անձանքն հռչակոյտեցը ցրուած են մեր հայրենիքի դաշտերուն վրայ։ Իդժով կանգնենք անոնց գերեմաններու վրայ Ս. Խաչի նշանը, անմահութեան արձանը։ Վասն զի տիւրը է այն գերեզմանն, որու վրայ չի շողար յափտեանական կենսելի յոյսը։ Թող աշխարհասէրք իրենց գերեզմանները զարդարեն կանաչ պսակներով, ծաղկներով փունջերով, թող ողողեն ջերմ արտասուքով, ան միշտ անխօս է և ցուրտ, վասն զի բարեպաշտութեան կոչը չի գար և չի շշնչեր մեր ականջին՝ Քրիստոսի մխիթանքով։ Առանց խաչի գերեզմանը բեզ կ'ըսէ, թէ հոս մահու թագաւորութիւնն է, ամենայն ինչ ոչնչութիւն է։ դիակը ներքէն կը խօսի։ Հատաւ յոյս մեր և կորեաք։ այս խօսքը հոգեշունչ մարգարէն կը զնէ այն թշուառներու բերանը։ Ընդհակառակն ճշմարիտ քրիստոնէի համար, գերեզմանի վրայ փրկչական խաչի տարածուած թեւեր, քաղցր և մխիթարական լեզու մը կը խօսին մեր սրտին, այն հողակոյտէն, որու տակ կը ծածկուի մեր աչքերէն մեր սիրելեաց մահկանացու մնացորդը, կը հասնի մեզի լուսափայլ հրեշտակի ձայնը, որ Քրիստոսի գերեզմանի քարի վրայ նստած, լացող իւղաբեր կիներուն ըսաւ։ Զի՛ բայք, զի խնդրէք, յարեա՛ւ, չէ աստ։

(Շարունակելի)